սիան 3½ ժամ, ուստի կը դառնայ ի Հիւսիս մինչև ափն երասխի, ուստի կուղղուի յարևելս ի Կաղզուան։

18, Զաթայ կիրճ, որ մի ժամ կը տևէ անցքը Ցէլի-բաբայի և Մօլլասիւլէյմանայ մէջ, կանցնի Խալեազի հիւսիսից։

Բ Ե Ր Դ Ե Ր

Ալաշկերտի դաշտային մասն, որ մօտ 100 գիւղերէ կը բաղկանայ ոչ մի վայր բերդի հետք չերևիր, բայց ի Խաստուր գիւղէ, որ դաշտիս արևմտեան կողմն բարձր դաշտային վայր մի գրաւած է, ուր կերևին հին բերդի հետքեր և մէջը գտնուած է բևեռագրով քառակուսի մի քար։

Դաշտս շրջապատող ամէն գիւղօրայք, նաև լեռնահովիտներու մէջ հաստատուած գիւղօրայք մեծաւ մասամբ ունին իւրեանց ապաստանարան բերդն, մեծ և փոքր բերդօրէից հետքեր գրեթէ ամէն գիւղի շուրջն կերևին։

Բագրևանդ արշաւանաց ճանապարհի վերան գտնուելով միշտ պէտք ունեցած է ինքնապաշտպանութեան, եթէ ոչ դիմադրելու, գոնէ ապաստանարան գտնելու համար իւր գիւղի բարձունքը կամ բարձր լեռներու ու ժայռերու և կամ բլուրներու գագաթն պարիսպ շինած ու մէջն է մտած իւր ընտանեօք, որպէս զի մինչև հրոսակներու արշաւանաց հոսանքը անցնի։

Այսպիսի բերդօրէից թիւը արևմտեան դաշտի շուրջն միայն 150—200 կը կարծուի, իսկ կան քանի լեռներ, որք իրրև բերդ գործածուած են, որոց գագաթն ապաստան գտած են դաշտային և լեռնային ժողովուրդք միանգամայն, որք ընդհանուր ժողովրդեան ապաստանարան դարձած են մեծ պատերազմներու ժա-